

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ-
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ընկերության իսկական անգամ
յլրդատմտեսական գիտութ. քննածու
Հ. Տ. ՍՄԻՆՏՅԱՆ

ԱՅՆԱՆԱՑԱՆ ՑՈՐԵՆԻ ԲԱՐՁՐ ԲԵՐԷԻ ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱՆ

«Սպարտակ» կոլխոզի Սոցիալիստական Աշխատանքի
Հերոսների փարձի ամփոփումը

Մատուցում եղանի կոլխոզային ակերվի համար
կարդացած դասախոսության տղադրություն

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ-ԳԱ ՀՐԱՅԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1948

633.11(77.925) 13577

U-64 Սփարյան Յ.Տ.

Աշխատանքների ցուցակ

Գրքերի քանակ

15/11

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ
ՏԱՐԱԾՄԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

633.11(47.925)

Ս-61

Լրաց.

Ընկերության իսկական անդամ
գյուղատնտեսական գիտութ. քեկնածու

Հ. Տ. ՍՄԻՐՆԱՅԱՆ

338.1K(47.925)

ՍՏՈՒՊԱԿԱՆ Է 1961

ԱՃՆԱՆԱՑԱՆ ՑՈՐԵՆԻ ԲԱՐՁՐ ԲԵՐՔԻ ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱՆ

«Սպարտակ» կոլտոգի Սոցիալիստական Աշխատանքի
Հերոսների փառքի ամփոփումը

Մատուցում եղանի կոլտոգային ափսիվի համար
կարդացած դասախոսության տղագրությունը



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐ ԳՐԱ ԶՐԱՏԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1948

13577
A 18207

Действительный член общества
кандидат сель-хоз наук
А. Т. СМБАТЯН

**АГРОТЕХНИКА ВЫСОКИХ УРОЖАЕВ
ОЗИМОЙ ПШЕНИЦЫ**

Обобщение опыта Героев Социалистического
Труда колхоза «СПАРТАК»
(На армянском языке)

Издание Общества по распространению политических
и научных знаний Арм. ССР
Ереван, 1948 г.

ՄԵԾ ՎԵՐԵԼՔԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

«Հետպատերազմյան ժամանակաշրջանում գյուղատնտեսութեան վերելքի միջոցառումների մասին» Համ Կ(բ)Պ Կենսոլոմի փետրվարյան պլենումի ղյատմական որոշումն իր վիժխարի կազմակերպական ուժով անդուլ և անձնուրաց պայքարի դուրս բերեց գյուղատնտեսութեան թուլոր աշխատավորներին՝ ամենակարճ ժամկետում մեր երկրում պարենի և հումքի սուստութեան և պետական անհրաժեշտ ռեզերվների կուտակում ստեղծելու համար: Այդ որոշումը դարձավ պայքարի ու հաղթանակի հզոր զենք գյուղատնտեսութեան բազմամիլիոն աշխատավորների համար: Հետպատերազմյան վերելքի Ստալինյան ծրագիրը կենսագործելու համար գյուղում բարձրացավ համաժողովրդական արտադրական արշավ, սոցիալիստական մրցութեան նոր և հուժկու ալիք: Այդ մրցութեան բովում ծնունդ առան և աճեցին շատ նոր տաղանդավոր մարդիկ՝ բարձր բերքի հիանալի վարպետներ, որոնք գերազանցեցին բերքատութեան մինչև այդ եղած բոլոր ցուցանիշները:

Համ Կ(բ)Պ Կենսոլոմի փետրվարյան պլենումի որոշումների լույսի տակ առավել կարեոր նշանակութեան ստացավ հացահատիկային տնտեսութեան հետագա հզոր վերելքը, որը մոտակա երկու տարվա ընթացքում պետք է իր համախառն արտադրանքով հասնի նախապատերազմյան մակարդակին, այն հաշվով, որ Ստալինյան այս

հնգամյակի վերջին գերազանցի նախապատերազմյան մահարդակը: Հացահատիկի համախառն բերքի աչդպիսի աճը պետք է տեղի ունենա ցանքատարածություններին զարգաճիման և, որ գլխավորն է՝ բերքատվության բարձրացման միջոցով:

Հացահատիկային կուլտուրաների բերքատվությունը բարձրացնելու գործում բարձր բերքի վարպետների ուսանելի փորձը ցույց է տալիս, թե ինչպիսի անսովառ և զեռ չօգտագործված հնարավորություններ կան բերքատվության բարձրացման համար:

Թալինի շրջանի Ձիթհանքով գյուղի Բուզդոննուռ անվան կոլխոզի օղակավարուհի, Սոցիալիստական Աշխատանքի Հերոս Մարիամ Մարտիրոսյանի հիանալի օրինակը, որը 1946 թվականին 10 հեկտար անջրդի հողամասի յուրաքանչյուր հեկտարից ստացավ 39,5 ցենտներ աշնանացան ցորենի միջին բերք, նույն կոլխոզի օղակավարուհի, Լենինի շքանշանակիր Օֆիկ Մադոյանի օրինակը, որը նույնքան տարածությունից ստացավ հեկտարից 38 ցենտներ միջին բերք, կամ Ախատայի շրջանի Ֆանտան գյուղի Գր. Հարությունյանի անվան կոլխոզի օղակավար, Սոցիալիստական Աշխատանքի Հերոս Սերյոժա Վարդանյանի և բրիգադիր Տիգրան Հովհաննիսյանի օրինակը, որոնք 1947 թվականին յուրաքանչյուր հեկտարից ստացան ավելի քան 30 ցենտներ միջին բերք, այդ բանի պայծառ վկայությունն են հանդիսանում:

Միսիանի շրջանի Բորիսովկա գյուղի «Ավանգարդ» կոլխոզից բարձր բերքի վարպետները 1947 թվականին գարնանացան ցորենի յուրաքանչյուր հեկտարից միջին հաշվով հավաքեցին 33—41 ցենտներ բերք:

Բարձր բերքի վարպետները շատ անուններ կարելի

է հիշատակել նաև Կոտայքի, Ախուրյանի, Թալինի, Աշտարակի և այլ շրջաններէց:

Առանձնապէս մեծ համբավ վաստակեցին Նոր-Բայազետի շրջանի Կարմիր գյուղի «Պարտակ» կոլտոզի քարձր բերքի վարպետները, որոնցից առաջավորները՝ յոթ ընկերներ արժանացան Սոցիալիստական Աշխատանքի Հերոսի կոչման:

Բազմաթիւ են այն դեպքերը, երբ 10—12 ցեղաներ միջին բերքի փոխարեն, որ ստանում են մեր Ռեպուլիկայի կոլտոզներում շատ բրդադէներ և օղակներ, նույնպիսի հողային, կլիմայական, արտադրական պայմաններում հարկան առանձին բրդադէներ և օղակներ մշակած հողերի բերքատուությունը հեկտարից կազմում է 25—35 և ավելի ցեղաներ:

Բարձր բերքի վարպետների փորձի ուսումնասիրութեամբ հնարավորութեամբ է տալիս անելու հետեյալ ընդհանուր եզրակացութեանները:

Բարձր բերք կարելի է ստանալ տարբեր կլիմայական պայմաններում:

Բարձր բերք կարելի է ստանալ բոլոր տիպի հողային պայմաններում:

Բարձր բերք կարելի է ստանալ թե՛ ջրովի և թե՛ անջրդի պայմաններում:

Բարձր բերք կարելի է ստանալ թե՛ աշնանացանից և թե՛ գարնանացանից:

Բարձր բերք կարելի է ստանալ տարբեր սորտերի մշակման պայմաններում:

Այսպէս օրինակ, 1946 թվին Թալինի շրջանի Ձիթհանքով գյուղում օղակավարուհիներ՝ Մարիամ Մարտիրոսյանը յուրաքանչյուր հեկտարից 39,5 ցեղաներ, իսկ Օֆիկ Մադոյանը 38 ցեղաներ աշնանացան «ստեպնայաչ-

կա» սորաի ցորենի միջին բերք ստացան, շաղանակագույն, միջին ավազա-կավային, քարքարոտ, միջին հզորության անջրդի հողամասերից, Նույն, 1946 թվին կոտայքի շրջանի Պտղնի գյուղի կոլխոզում Աշխատանքային կարմիր Դրոշի շքանշանակիր Անդրանիկ Սարգսյանի օղակը, մուգ-գորշ, քարքարոտ, թեթե կավային, ջրովի հողամասի 15 հեկտար տարածությունից աշնանացան «սպիտակահատ» սորաի յուրաքանչյուր հեկտարից ստացավ 22,3 ցենտներ միջին բերք, իսկ օղակի մշակած առանձին հեկտարներից նա ստացավ 28 և ավելի ցենտներ:

Ինչպես նշեցինք վերևում, Սիսիանի շրջանի Բորիսովկա գյուղի կոլխոզում դարնանացան ցորենի «էրինացեում» սորաից հեկտարից ստացվել է 41 ցենտներ բերք:

Նոր-Բայազետի շրջանի կարմիր գյուղի կոլխոզի բարձր բերքի վարպետներ, Սոցիալիստական Աշխատանքի Հերոսներ՝ Սիրուն Ումրշատյանը, Հակոբ Զրաղացպանյանը, Խաչատուր Դավթյանը, Դրաստամատ Սարգսյանը, Սիսակ Շնգոյանը, Խաչատուր Վարդանյանը ծանր կավային, մուգ-շագանակագույն անջրդի հողերի պայմաններում «ուկրաինկա» սորաից ստացան հեկտարից 30—32 ցենտներ միջին բերք: Նույնպիսի առատ բերք ստացան նաև Նույն շրջանի Հացառատ գյուղի կոլխոզի օղակավարներ՝ Անուշավան Ասատրյանը և Մեխակ Մանուկյանը աշնանացան «ուկրաինկա» սորաից՝ անջրդի, մուգ-շագանակագույն միջին կավային հողամասերից:

Այս փաստերը պերճախոս կերպով հիմնավորում են այն եզրակացությունը, որ բարձր բերք կարելի է ստանալ տարբեր հողային, կլիմայական պայմաններում, թե աշնանացան և թե գարնանացան սորոսերից. բարձր բերք կարելի է ստանալ թե ջրովի և թե անջրդի պայմաններում:

Նոր-Բայազետի շրջանի կարմիր գյուղի կոլխոզի

վարչության նախագահ, Սոցիալիստական Աշխատանքի
Հերոս՝ Սարգիս Վարդանյանը շատ ճիշտ կերպով աստա-
հայտում է առաջավոր կոլխոզնիկների այն միտքը, որ
«առաջավոր ագրուտեխնիկայի ճիշտ կիրառմամբ մեր հո-
գերը ի վիճակի են ամենուրեք տալու բարձր բերք: Մեր
խնդիրն է՝ հենվել սովետական առաջավոր ագրոնոմիա-
կան գիտության նվաճումների և բարձր բերքի վարպետ-
ների հարուստ փորձի վրա, ընդհանուր և համատարած
վերելք ստեղծել բերքատվության բարձրացման գործում»:
Հենց այդպես էլ վարվում են Նոր-Բայազետի շրջա-
նի Կարմիր գյուղի «Սպարտակ» կոլխոզի բարձր բերքի
վարպետները:

Համառոտակի սլառներն անհրաժեշտ փորձի մասին:

ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՃԸ

Ամբողջ սովետական երկրին այժմ ծանոթ են Նոր-
Բայազետի շրջանի Կարմիր գյուղի «Սպարտակ» կոլխոզի
վարչության նախագահ Սարգիս Վարդանյանի և օղակա-
վարներ Սիրուն Ումրշատյանի, Հակոբ Զրադացյանյանի,
Խաչատուր Վարդանյանի, Դրաստամատ Սարգսյանի, Խա-
չատուր Դալժյանի և Մխակ Նեզոյանի անունները:
«Երբ 1947 թվականին իրենց գերագանց՝ աշխատանքի
համար արժանացան Սոցիալիստական Աշխատանքի Հերո-
սի բարձր կոչմանը:

Կոլխոզի վարչությունը, սլառների կազմակեր-
պչությունը և բոլոր կոլխոզնիկներն ու կոլխոզնիկուհի-
ները մեծ ջանքեր են գործադրել բերքատվության բարձ-
րացման ասպարեզում: Կոլխոզը 1947 թվականին իր
930 հեկտար հացահատիկի ցանքի յուրաքանչյուր հեկ-

տարից ստացել է 12,44 ցենտներ միլլին բերք, պլանով նախատեսված 11 ցենտների փոխարեն, ըստ որում աշնանացան ցորենի 520 հեկտարից ստացել է 15,3 ցենտներ միլլին բերք, իսկ 51 հեկտար աշնանացան տարածության յուրաքանչյուր հեկտարից նույն տարում ստացել է 31,2 ցենտներ բերք: Կոլխոզն իր լավ աշխատանքով ապահովել է վերջին տասնամյակի ընթացքում հացահատիկային կուլտուրաների բերքատվության հետևողական բարձրացումը, որը ցույց է տրվում ստորև բերված աղյուսակում:

Հացահատիկային կուլտուրաների ցանատարածությունն ու բերատվությունը

Տարեթիվ	Ցանքը հեկտարներով	Բերքատվությունը ցենտներով
1937	802	8,50
1940	960	8,90
1947	930	12,44

Կոլխոզն զգալի աշխատանք է կատարել ցանքատարածությունների ընդարձակման ուղղությամբ: Հողամասերի մեջ հնուց «Ժառանգութուն» մնացած կուտակված քարերը (ղէրը) դուրս են հանվել և հեռացվել դաշտերից, վերացվել են միջնակները, որոնց հետևանքով ազատված տարածությունները միացվել են վարելահողին: Այդ հզանակով կոլխոզը վերջին տարիների ընթացքում իր ցանքատարածությունները լայնացրել է ավելի քան 50 հեկտար լավորակ հողերով: Ցանքաշրջանառության անցնելու կապակցությամբ կոլխոզն ընդլայնել է բաղամյա խոտաբույսերի (կորնդանի) ցանքատարածությունը, ամուր հիմք ստեղծելով բերքատվության հետագա բարձրացման

և անտոնապահության զարգացման համար: Վերջին տասնամյակի ընթացքում կորնգանի ցանքատարածությունը կոլխոզում աճել է հետևյալ չափերով:

Կորնգանի ցանքատարածության անը	
Տարեթիվ	Կորնգանի ցանքատարածությունը հեկտարներով
1937	32
1940	57
1947	167

Քարակույտերը դաշտերից հեռացնելու ու միջնակները վերացնելու հետևանքով ստեղծվել են հողաչին ամբողջական և ընդարձակ տարածություններ, որով լայն հնարավորություններ են ստեղծվել արակտորների և կոմբայների անխափան աշխատանքի համար՝ գյուղատնտեսական դաշտային աշխատանքների մեքենայացման համար:

Աշխատանքը ճիշտ կազմակերպելու, աշխօրերի ծախսումը պլանավորելու և բերքատվությունը բարձրացնելու շնորհիվ կոլխոզում մեծ չափով բարձրացել է աշխօրերի արժեքը և իջել հացահատիկի արտադրությունը ինքնարժեքով:

Հացահատիկի ինքնարժեքն աշխօրերով	
Տարեթիվ	Մեկ ցենտներ հացահատիկ արտադրելու համար ծախսված աշխօրերի քանակը
1940	5,7
1944	3,8
1947	3,3

Այս բոլորը լայն հնարավորություններ են ստեղծում բերքատվությունը հեռեդականորեն բարձրացնելու համար:

Բարձր բերք ստանալու գործում վճռական նշանակություն ունի ագրոձեռնարկումների կոմպլեքսը լրիվ, ժամանակին ու ճիշտ կիրառելը:

«Սպարտակ» կոլխոզում ստացված բարձր բերքը հենց առաջին հերթին առաջավոր ագրոտեխնիկայի կիրառման արդյունքն է: Սպարտակցիները համառորեն հետևում են սովետական առաջավոր գիտության խոսքին և իրենց պրակտիկ աշխատանքներում լայն չափով օգտագործում են սովետական մեծ երկրի առաջավոր կոլխոզիկների հարուստ փորձը:

ՑԱՆՔԱՇՐՋԱՆԱԲՈՒԹՅՈՒՆԸ

«Սպարտակ» կոլխոզի բարձր բերքի վարպետները մեծ նշանակություն են տալիս ցանքաշրջանառությանը, որպես բերքատվության բարձրացման և անասնապահության զարգացման կարևոր միջոցի:

Ճիշտ ցանքաշրջանառությունը՝ բազմամյա խոտաբույսերի առկայությամբ ապահովում է հողի բերրիության հետևողական բարձրացումը, ապահովում է պայքարը մոլախոտերի, վնասատուների, հիվանդությունների դեմ, ապահովում է հանրային անասունների համար անհրաժեշտ քանակությամբ բարձրորակ կեր:

Այժմ կոլխոզն իրացնում է և մինչև 1950 թվը լիովին կիրացնի յոթդաշտյան ցանքաշրջանառությունը՝ կուլտուրաների ընդունված հետևյալ հաջորդականությամբ.

1-ին դաշտ	.	.	.	ցել
2-րդ »	.	.	.	աշնանացան
3-րդ »	.	.	.	գարնանացան, կորնգանի- ենթացանքով
4-րդ »	.	.	.	կորնգան
5-րդ »	.	.	.	կորնգան
6-րդ »	.	.	.	գարնանացան
7-րդ »	.	.	.	աշնանացան

Ցանքաշրջանառության համաձայն աշնանացանը ցանվում է ցելից հետո: Դրա կարևորությունը շատ լավ պիտակցում են սպարտակցիները և 1946 թվին իրենց 520 հեկտար աշնանացանից 508 հեկտարը կատարել են ցելի վրա, իսկ մնացած 12 հեկտարը կորնգանից հետո գարնանացան կատարած հողում, այսպիսով պահպանելով ցանքաշրջանառության տեսակետից այս կարևորագույն պահանջը: Այդ է հիմնական պատճառներից մեկը, որ 1947 թվին կոլխոզն իր ամբողջ աշնանացան տարածության յուրաքանչյուր հեկտարից ստացել է 15,3 ցենտներ միջին բերք:

Անհրաժեշտ է հաշվի առնել այն, որ աշնանացանին նախորդող կուլտուրայից (գարնանացանից) դաշտը ազատվի շուտ, որ մինչև աշնան ցանքը հնարավոր լինի հողը վարել առնվազն 10—15 օր առաջ, որպեսզի մինչև ցանքն սկսվելը հողը նստի, որովհետև վարից անմիջապես հետո ցանք կատարելու դեպքում, վարված հողաշերտը հետագայում նստում է և հաճախ տեղի է ունենում թփակարման հանգուցի մերկացում և բույսերի ցրտահարում:

Ցանքաշրջանառության մեջ բազմամյա թիթեռնածաղկավոր խոտաբույսերի (կորնգանի, առվույտի) մշակությունն առանձնապես խոշոր նշանակություն ունի հողի մեջ օրգանական նյութերի և հատկապես ազոտի

կուտակման, հողում կնձկային կազմութիւնն ստեղծելու և ընդհանրապես հողի ֆիզիկական հատկութիւնները բարելավելու տեսակետից: Հաշվի առնելով այդ բոլորը, սպարտակցիները, որպես բերքատուության բարձրացման հզոր միջոցի, մեծ տեղ են տալիս կորնդանին, տարեց-տարի լայնացնելով նրա ցանքատարածութիւնը: Բավական է նշել, որ վերջին տասնամյակի ընթացքում (1937—1947 թ. թ.) կոլխոզը կորնդանի ցանքատարածութիւնն ընդարձակել է ավելի քան հինգ անգամ, հասցնելով այն 167 հեկտարի:

Սակայն ինչպես ուսուցանում է սովետական աւանավոր գիտնական Վ. Ռ. Վիլյամսը ցանքաշրջանառութիւն մեջ արհեստական խոտացանութիւնը, որպես հողի բերրիութիւնը բարձրացնելու միջոց իր լրիվ ներդրածութիւնն է ունենում հողի վրա այն դեպքում միայն, երբ բազմամյա թիթեռնածաղկավոր խոտաբույսի հետ խառը ցանվում է նաև հացազգի բազմամյա խոտաբույս («ռայգրաս», «Ժիտնյակ» և այլն): Բազմամյա թիթեռնածաղկավոր և հացազգի խոտաբույսերի խառը ցանքը դաշտային ցանքաշրջանառութիւն մեջ առավել չափով ապահովում է հողի բերրիութիւնը հետևողական բարձրացումը: Այդ իսկ տեսակետից ցանքաշրջանառութիւն անցնելու հետ միասին պետք է ձեռք բերել հացազգի խոտաբույսերի սերմեր և ձեռնամուխ լինել խոտախառնուրդների լայն կիրառման:

Հացազգի բազմամյա խոտաբույսերը լայն չափով տարածված են վայրի վիճակում. անհրաժեշտ է նաև կազմակերպել նրանց սերմերի հաւաք և բազմացում, ցանքաշրջանառութիւն մեջ որպես խոտախառնուրդ օգտագործելու համար:

Բարձր բերք ստանալու գործում սղարտակցիները մեծ կարևորություն են տալիս հողի ճիշտ և բարձրորակ մշակությանը: Յանքաշրջանառության համաձայն աշխանացան ցորենը պետք է ցանել ցելի վրա: Յելի շնորհիվ հողի մեջ բույսերի համար ստեղծվում է մատչելի սննդանյութերի պաշար, հողում կուտակվում և պահպանվում է ավելի շատ խոնավություն աշխանացանի համար: Բացի դրանից, ցելը կարևոր նշանակություն ունի նաև մոլախոտերը ոչնչացնելու տեսակետից:

«Սպարաակ» կոլխոզի բարձր բերքի վարպետներ, Սոցխալիստական Աշխատանքի Հերոսներ՝ Հակոբ Զրադացւանյանը, Խաչատուր Վարդանյանը, Դրաստամատ Սարգսյանը, Սիրուն Ումրշատյանը, Խաչատուր Դավթյանը և Սիսակ Շնգոյանը շատ բարձր են գնահատում ցելի նշանակությունը և այն համարում են բարձր բերք ստանալու հիմնական պայմանը:

—Առաջներում, երբ մենք աշխանացանը ցանում էինք խոզանավարի վրա, հեկտարից ստացվում էր ընդամենը 5—6 ցենտներ բերք, իսկ այժմ ցանքը կատարելով ցելի վրա, ինչպես նաև մի շարք այլ ագրոճեռնարկումներ կիրառելով, մենք հեկտարից ստանում ենք 30 և ավելի ցենտներ բերք, —ասում են նրանք:

Յելի նշանակությունն առանձնապես աչքի է ընկնում երաշտ տարիներին, երբ ցելադաշտում հողի մեջ կուտակված խոնավությունը երկար ժամանակ ցանքերը պահպանում է երաշտից, մինչդեռ խոզանավարի վրա կատարված աշխանացանը նույնիսկ թեթև երաշտից ուժեղ չափով տուժում է: Յելը բարձրացնում է ոչ միայն անմիջապես նրա վրա ցանվող աշխանացանի

բերքատվությունը, այլև աշնանացանին հաջորդող ցան-
քաշրջանառությամբ նախատեսված մյուս կուլտուրա-
ների բերքատվությունը:

Թե «Սպարտակ» կոլխոզում ինչպիսի խոշոր ար-
դյունքների են հասել ցելի շնորհիվ, կարելի է տեսնել
ստորև բերվող տվյալներից:

Յելերի տարածությունը և բերքատվության անը

Տարեթիվ	Հացահատիկային կուլտուրաների տարածությունը հեկտարներով	Ցելի տարածու- թյունը հեկտար- ներով	Մեկ հեկտարի բերքատվությունը ցենտներով
1937	802	210	8,50
1942	932	51	4,30
1947	930	508	12,44

Մեծ է լինում ցելի արդյունավետությունը, երբ այն
լավ է մշակվում:

Շատ կարևոր է ցելադաշտի հիմնական վարի ժամա-
նակի ճիշտ ընտրությունը. դա անպայման պետք է կա-
տարել հողի հասուն (քեշի) վիճակում: Ցելադաշտի, ինչ-
պես չոր, նույնպես և գերխոնավ վիճակում վարելը խիստ
բացասական արդյունք է տալիս, առաջին դեպքում հողի
փոշիացման, իսկ երկրորդ դեպքում կոշտեր առաջանա-
լու հետևանքով:

Սոցիալիստական Աշխատանքի Հերոս Սիրուն Ումր-
շատյանն իր օղակի հողամասում, որի յուրաքանչյուր
հեկտարից 1947 թվին նա ստացել է 30,1 ցենտներ բերք,
ցելի հիմնական վարը կատարել է մայիսի 5-ին:

— Մեզնից շատերն առաջներում այն կարծիքին
էին, — ասում է նա, — որ նախ պետք է վերջացնել զարնա-
նացանը և ապա նոր սկսել ցելը: Դա ճիշտ չէ, ցելի հիմ-

նախնի վարը պետք է կատարել անկախ դարնանացանից, ճիշտ այն պահին, երբ հողը հասունացել է: Մեզ մոտ դա տեղի է ունենում ապրիլի վերջերին, կամ մայիսի սկզբներին:

Յեղի որակի կարևոր ցուցանիշներից է նրա հիմնական վարի խորութիւնը: Խոր վարի միջոցով հզոր ակտիվ հողաշերտ է ստեղծվում բույսերի արմատների զարգացման համար և մեծ շտեմարան, խոնավության կուտակման ու պահպանման տեսակետից: Խոր վարի շնորհիվ հեշտանում է օդի ներթափանցումը գետի հողի խորը շերտերը, որը նպաստում է աչնտեղ ապրող միկրոօրգանիզմի գործունեութեանը և սննդաբար նյութերի առաջացմանն ու կուտակմանը: Խոր վարը ավելի մեծ նշանակութիւն ունի մոլախոտերի դեմ պայքարելու տեսակետից:

Սոցիալիստական Աշխատանքի Հերոս, փորձված օդակավար Սիսակ Ենգոյանը, որը երկար տաքիններ աշխատում է կոլխոզում որպէս մաճկալ և 1947 թվին իր օդակի 10 հեկտար տարածութեան յուրաքանչյուր հեկտարից ստացել է 31,5 ցենտներ ցորեն, ցելադաշտի հիմնական խոր վարով է բացատրում այն, որ իր օդակի հողամասում շատ չնչին քանակութեամբ մոլախոտեր կան: Նրա օդակի հողը ծանր, մուգ շագանակագույն, միջին կավային, թույլ քարքարոտ հող է՝ հզոր հողաշերտով: Նա ցելադաշտի հիմնական վարը կատարել է 25—26 սմ խորութեամբ:

— Կարևորն այն է, որ վարելիս առը նեղ վերցնել, որ հնարավոր լինի հողը լրիվ շուռ տալ, այդ դեպքում հողի մակերեսին եղած մոլախոտերի սերմերն ընկնում են հողի խոր շերտում, հաստ հողաշերտով ծածկվում, որտեղ նրանք ծլել ու բարձրանալ չեն կարող, հետևապէս ոչնչանում են, — ասում է ընկ. Ենգոյանը:

Վարի խորութիւնը սահմանելիս անհրաժեշտ է հաշիւ առնել հողաշերտի հզորութիւնը: Պակաս հզորութիւն ունեցող հողերում, խոր վարը վեր հանելով ենթահողը և խառնելով վարելաշերտի հետ, հաճախ բերքի նվազման պատճառ է դառնում: Այդ բանը լավ գիտեն «Սպարտակ» կոլխոզի օղակավարները և այդ հաշիւ են առնում՝ վարի խորութիւնը սահմանելիս: Այսպէս, օրինակ, Սոցիալիստական Աշխատանքի Հերոս օղակավար Խաչատուր Դավթյանը, որը նույնպէս բազմամյա մաճկալ է, իր օղակի մշակած հողամասի յուրաքանչյուր հեկտարից 1947 թվին ստացել է 31,2 ցննտներ ցորեն. նա իր օղակի հողամասի տարբեր մասերում վարը տարբեր խորութեամբ է կատարել: Նրա օղակի հողամասի որոշ տեղը զգալի թեքութիւն ունի և հողաշերտը նվազ է, իսկ մնացած մասը հարթ է, բավականին հզոր հողաշերտով: Խաչատուր Դավթյանը հողամասի նվազ հողաշերտ ունեցող մասում վարը կատարել է 18—20 սմ խորութեամբ, իսկ հզոր հողաշերտ ունեցող մասում՝ 24—26 սմ խորութեամբ:

Շատ կարեւոր է ցելադաշտի հիմնական վարը կատարել աշնայեա, որ հողի մակերեսային փոշւացած շերտն ընկնի ակոսի հատակը, իսկ խորը շերտերի կնձկային կազմութիւնն ունեցող հողը վեր բարձրանա հողի մակերեսը: Այդ ձևով կատարած վարը հեշտութեամբ չի կեղեկակալվում, ավելի լավ է ընդունում և պաշարում իր մեջ անձրևների խոնավութիւնը, — ասում է Սոցիալիստական Աշխատանքի Հերոս, կոլխոզի վարչութեան նախագահ Սարգիս Վարդանյանը:

Ցելադաշտը վարելուց անմիջապէս հետո անհրաժեշտ է հողը լավ փոցխել-հարթեցնել, որպէսզի կանխվի հողի մեջ եղած խոնավութեան գոլորշիացումը:

Տրակտորային վարի դեպքում այդ արվում է հենց վարի հետ միասին, փոցխը գութանին կցելով:

Ավելի մեծ է լինում ցելի արդյունքը, երբ նրա հիմնական վարը կատարվում է նախախոփիկ ունեցող գութաններով: Մեր խնդիրն է՝ ինչպես ցելի, նույնպես և ճամշերտի հիմնական խոր վարի ժամանակ անպայման օգտագործել նախախոփիկ ունեցող գութաններ:

Ժամանակին կատարված ցելը անհրաժեշտ է ամբողջ ամռան ընթացքում պահել փուխը և մոլախոտերից զերծ վիճակում, որպեսզի պահպանվեն հողի մեջ կուտակվող անհրաժեշտ սննդանյութերն ու խոնավությունը— աշնանացանի համար: Դրան կարելի է հասնել ամռան ընթացքում ցելի հողամասում 3—4 անգամ կուլտիվացիա կատարելու և փոցխելու միջոցով (հողի երեսը կեղևա-կալելու և մոլախոտեր երևան դալու դեպքում):

Այս եղանակով մշակված ցելի մեջ կուտակվում է խոնավության ախպիսի պաշար, որ կատարված աշնանացանը, անկախ աշնանը տեղացող անձրևներից, ծլում է, արմատակալում և կանոնավոր կերպով թփակալում մինչև հոկտեմբերն ընկնելը: Ծիշտ կերպով մշակված ցելը, որն իր մեջ թափականաչափ խոնավություն է կուտակել, հնարավորություն է տալիս աշնան ցանքը կատարել լավագույն ժամկետում, չկապելով այն մթնոլորտային տեղումների հետ:

Մոլախոտերի դեմ տարվող պայքարը ցելադաշտում իրականացվում է հետևյալ կերպ՝ մոլախոտերի սերմերի ծլեցման համար ստեղծվում են լավագույն պայմաններ և երբ դրանք ծլում և մի քիչ աճում են, կատարվում է հողի կուլտիվացիա: Կոլխոզի անվանի օղակավարները ցելադաշտի մշակությունն ամռան ընթացքում կատարում են երկու անգամ՝ առաջինը հունիսի կեսերին՝ 10—14 սանտիմետր խորությամբ



և երկրորդը ցանքից 10—15 օր առաջ 8—10 սանտիմետր խորությամբ:

Այն հողամասերում, որտեղ հողը վարակված է առանձնապես «պոչուկ» կամ «խրվուկ» մոլախոտով, ցեղադաշտի ամռան մշակությունը կատարվում է հատուկ եղանակով: Այդ մոլախոտերը ոչնչացնելու համար կարելի է լինում ամռան ընթացքում մի քանի անգամ մշակել, շուտ տալ հողը, կամ կուլափայցիա կատարել յուրաքանչյուր անգամ, նախորդ մշակման համեմատությամբ պահա խորությամբ: Այս ձևով մշակելու ժամանակ, հողի խորը շերտերում գտնված մոլախոտի սերմերը բարձրանում են հողի վերին շերտերը, որտեղ նրանք ծլում են և ապա ոչնչացվում հաջորդ մշակման ժամանակ: Այսպիսով հեազհետե պակասեցնելով ամռան ընթացքում կատարվող մշակման խորությունը, հողը շերտ առ շերտ մաքրվում է մոլախոտից:

Ցեղադաշտի հողն ամռան մշակությունների ընթացքում լավ նախապատրաստելու, երբեմն սպորդնած, խամ ֆնացած (խարակ) տեղերը վերացնելու և մոլախոտերը լիովին ոչնչացնելու համար շատ կարևոր է, որ ցելի իրար հաջորդող մշակությունները կատարվեն խաչաձև, կամ շեղ ուղղությամբ: Սոցիալիստական Աշխատանքի Հերոսներ Դրաստամատ Սարգսյանը, Հակոբ Ջրադացպանյանը և մյուս հմուտ օգակավարներն այդ միջոցառումը համարում են ցելի բարձրորակ մշակության հիմնական պայմաններից մեկը:

Կոլտոգի փորձառու բրիգադավար Սաղաթել Հայրապետյանը, որը 1947 թվին իր բրիգադի 85 հեկտար հողամասի յուրաքանչյուր հեկտարից ստացավ 19 ցենտներ ցորեն, հողի մշակման կարևոր պայմաններից մեկն է համարում թեքություն ունեցող հողամասերում, ցելի

հիմնական վարը կատարել թեքությանը հակառակ՝ խա-
չածե ուղղությամբ. դա պահանջում է վարելաշերտի ման-
րահողը լվացումից, և որ կարևոր է, այդ ձևով վարված
ցերեպաշտում տեղումները լիովին ներծծվում են հողի մեջ:

ՊԱՐԱՐՏԱՅՈՒՄ

Բարձր բերք ստանալու համար, հողի բարձրորակ
մշակության հետ միասին, անհրաժեշտ է նաև հողը պա-
րարտացնել: Կիրառելով բարձր ագրոտեխնիկա, գյուղա-
տնտեսության առաջավորները միշտ էլ հատուկ ուշադ-
րություն են նվիրում հողի պարարտացմանը, համարե-
լով այն ագրոտեխնիկական կարևորագույն միջոցառում:

Մեր երկրում այժմ արտագրվում են մեծ քանա-
կությամբ հանքային պարարտանյութեր: Դրա հետ միա-
սին մենք ամենալայն չափերով օգտագործում ենք նաև
տեղական պարարտանյութերը՝ գոմաղբ, խառնաղբ, մո-
խր, երբեմն տորֆ և այլն:

Պարարտանյութերի ազդեցությունը հողում արտա-
հայտվում է երկու կերպ՝ նախ դրանք ավելացնում են
հողի մեջ բույսերի սննդառության համար անհրաժեշտ ու
ներանց կողմից հեշտ յուրացվող սննդանյութերը (ազոտ,
ֆոսֆոր, կալի և այլն) և երկրորդ՝ լավացնում են բույ-
սերի համար հողի օգտակար ֆիզիկական հատկություն-
ները (խոնավունակություն, օգաթափանցելիություն,
ջերմունակություն և այլն): Հողի ֆիզիկական հատկու-
թյունները լավացելու տեսակետից առանձնապես խո-
շոր նշանակություն ունի օրգանական պարարտանյու-
թերի օգտագործումը՝ գոմաղբ, խառնաղբ, տորֆ, որոնք
իրենց մեջ միաժամանակ պարունակում են բույսերի
սննդառության համար պահանջվող բոլոր սննդանյութերը:

Բարձր բերքի վարպետները լայն չափով օգտագործում են տեղական պարարտանյութեր՝ գոմաղբ, խառնաղբ, մոխիր, թե՛ հողի հիմնական պարարտացման և թե՛ բույսերի սնուցման համար:

Շատ կարևոր է, որ տեղական պարարտանյութերը և հատկապես գոմաղբը համապատասխան ձևով պահված լինեն: Պարարտացման համար օգտագործվող գոմաղբը պետք է կիսաքայքայված, ինչպես առում են, հասունացած լինի: Հասունացած գոմաղբն արտաքուստ ճանաչվում է իր միատարր տեսքով, գորշ գույնով, որի մեջ եղած դարմանը կամ ծղոտը քաշելուց հեշտությամբ փխրվում և քայքայվում է: Կիսաքայքայված, հասունացած գոմաղբի մեջ բույսերի համար մատչելի սննդանյութերը ավելի մեծ չափով են պարունակվում, քան թարմ գոմաղբի մեջ և, որ առանձնապես կարևոր է, հասունացած գոմաղբի մեջ մոլախոտերի ծլունակ սերմերի տեղոսը չնչին է լինում: Բարձրորակ գոմաղբ ստանալու համար անհրաժեշտ է կոլեկցի գոմերին կից հատուկ պատրաստված գոմաղբամբարներ ունենալ և գոմաղբը հավաքել ու պահպանել ափսոսել:

Գոմաղբը հողի մեջ մտցնելուց հետո, որպեսզի նա իր ազդեցությունը հանդես բերի, հարստացնի հողը սնունդանյութերով, պետք է քայքայվի, դրա համար էլ գոմաղբի ազդեցությունն առանձնապես բարձր է լինում այն դեպքում, երբ դա մենք հողի մեջ ենք մտցնում ոչ թե անմիջապես ցանքից առաջ, այլ նախապես: Դրա համար էլ աշնանացան ցորենի հողերում գոմաղբը պետք է օգտագործել ցելի հիմնական վարի ժամանակ:

Բարձր բերքի վարպետները որպես կանոն գոմաղբը մտցնում են հողի մեջ վաղ ցելի հիմնական վարի ժամանակ: Դա լավագույն պայմաններ է ստեղծում, որ գո-

մաղբը ցեղադաշտի մշակության ընթացքում լավ քայ-
քայլի և մինչև աշնան ցանքը հողը հարստանա մատչելի
սննդանյութերով:

Յուրաքանչյուր հեկտարին տրվում է 20—30 և ա-
վելի տոննա գոմաղբ, որը փռվում է դաշտում հավասա-
րաչափ և նույն օրը, վաղի ընթացքում, խառնվում է հողի
հետ: Այն դեպքում, երբ գոմաղբը փռվում է դաշտում
և հողն անմիջապես չի վարվում, հետևապես գոմաղբը
մնում է հողի երեսին, բացօթյա, դրա հետևանքով նրա
մեջ եղած սննդանյութերի զգալի կորուստ է տեղի ու-
նենում: Լավ պահված և ճիշտ ձևով հողին խառնած գո-
մաղբը դրախտի ազդեցություն է ունենում բերքատու-
թյան բարձրացման վրա՝ երկու և երեք անգամ ավելի տա-
րիներին ընթացքում:

«Սպարտակ» կոլեկտիվում, հացահատիկային կուլտու-
րաների պարարտացման համար օգտագործում են մեծ
յուսամբ խառնաղբը: Դա կազմված է մոխրից, որի հետ
խառնված են «գիշերային ոսկի», տնային աղբ, գոմաղբ
և զանազան մնացուկներ, որոնք գոյանում են անտեսու-
թյան մեջ:

Պարարտացման նպատակով բարձրորակ խառնաղբ
ստանալու համար դա նույնպես պետք է համապատաս-
խան ձևով պահվի: Անհրաժեշտ է, որ խառնաղբը բացօթյա,
անձրևների տակ չմնա, այլապես տեղի է ունենում նրա
մեջ եղած սննդանյութերի զգալի կորուստ:

«Սպարտակ» կոլեկտիվում խառնաղբի զգալի մասը
հավաքվում և պահվում է ծածկի տակ, որը մեծ չափով
նպաստում է նրա որակի բարձրացմանը:

1943—1947 թվականների ընթացքում կոլխոզի հա-
ջահատիկային կուլտուրաների պարարտացման համար
դաշտ է փոխադրվել հետևյալ քանակությամբ խառնաղբ.

Խառնադրի օգտագործման տներ

Տարեթիվ	Դաշտ փոխադրած խառնադրի բանակը տոննաներով
1943	4558
1944	7602
1945	7938
1946	8341
1947	8809

Խառնադրը հողն են մտցնում նույնպես հիմնական վարի ժամանակ, անմիջապես վարից առաջ այն նախապես համահավասար փոխելով հողամասի վրա: Յուրաքանչյուր հեկտարին օգտագործում են 8—10 երբեմն և ավելի տոննա խառնադր:

Սոցիալիստական Աշխատանքի Հերոս՝ Դրաստամատ Սարգսյանը խառնադրը վարպետորեն օգտագործում է նաև սնուցման համար, այն շաղ տալով դաշտում՝ ձնհալի ժամանակ:

ՍԵՐՄԱՅՈՒՆ

Լավ գտված, խոշոր և առողջ սերմացուից ստացվում է առատ բերք: Բարձրորակ սերմերից ծլած բույսերն ափելի գլմացիկուն են հիվանդություններին և վնասատուներին, և հեշտ են տանում կլիմայական անբարենպաստ պայմանները (սառնամանիք, երաշտ և այլն):

Սովետական ականավոր գիտնականներ Ի. Վ. Միչուրինը և Տ. Դ. Լիսենկոն ցույց են տվել, որ բարձրորակ սերմացուն առաջավոր բարձր ագրոտեխնիկայի պայ-

մաններում լավացնում է նաև նրա հետագա սերնդի ժառանգական (բարձր բերք տալու) հատկությունները:

Այդ բանը շատ լավ են գիտակցում կոլխոզի անվանի օղակավարները: Նրանք ամեն կերպ բարելավում են իրենց սերմացուն, զարգացնելով նրա մեջ վերելում հիշատակված հատկությունները: Ձե՞ որ «Սպարտակ» կոլխոզը շերմարուծական է և նա է հայթայթում ամբողջ Բայազետի շրջանի սերմացուն: Այդ գիտակցությունն ավելի է պարտավորեցնում նրանց՝ առանձին խնամք և հոգատարություն ցուցաբերել զեպի սերմարուծության գործը:

Սերմացուն պետք է լինի խոշոր, առուզ, մուլախոտերի սերմերից և աղբից միանգամայն ազատ և ունենա բարձր ծլունակություն:

Բարձր բերքի վարպետները սերմագտիչ մեքենայով սերմացուն հիմնովին մաքրում են մուլախոտերի սերմերից, նվազ ու ջարդված հատիկներից և աղբից: Իսկ առանձին առաջավոր կոլխոզիկները, զրանից բացի, կատարում են նաև սերմացուի հատրնտիք գտում՝ սերմացուից հեռացնելով բոլոր նվազ, չմշկված հատիկները:

Ցանքից առաջ սերմացուն արտահանում են ֆորմալինով կամ -- «Ա-Բ» պրեպարատով, մրիկ հիվանդությունից զերծ պահելու համար:

Սերմացուի որակի հետ կապված կարևոր է նշել նաև այն, որ կալից դուրս եկած թարմ հատիկի ծլունակությունը, ինչպես ապացուցել են մեր մի շարք գիտա-հետազոտական հիմնարկների փորձերը, անհամեմատ ավելի ցածր է լինում, քան նույն հատիկի ծլունակությունը, ասենք մեկ կամ մեկ և կես ամիս հետո. հետևապես, այնպիսի վայրերում, որտեղ բերքահավաքի և աշնան ցանքի ժամանակը համընկնում է, ինչպես դա տեղի ունի մեր ուս-

պուրլիկայի համարյա բոլոր լեռնային շրջաններում, նպատակահարմար է նույն տարվա հատիկը ցանել, այլ պետք է օգտագործել նախորդ տարվանից պահած սերմացուն: Այդ բանը հաշվի առնելով, սպարտակցիները աշնանացան ցորենի սերմացուի փոխանցիկ ֆոնդ են պահում հաջորդ աշնանը ցանելու համար, դրանով իսկ մեծ չափով բարձրացնելով իրենց սերմացուի որակը: Բացի դրանից, սերմացուի փոխանցիկ ֆոնդ ունենալու դեպքում հնարավոր է լինում աշնան ցանքը կատարել ամենալավ ժամկետում, անկախ բերքահավաքից:

«Լիարժեք հեկտար» ապահովելու համար անհրաժեշտ է ցանքը կատարել բարձրորակ սերմացուով, որը համապատասխանում է կոնդիցիայով սահմանված բոլոր պահանջներին:

Այն դեպքում երբ կոլխոզը չունի սերմացուի փոխանցիկ ֆոնդ, և ստիպված պետք է ցանի նույն տարվա բերքից ստացած թարմ հատիկը, սերմացուի ծլունակությունը բարձրացնելու համար, ինչպես դա ուսուցանում է Տ. Դ. Լիսենկոն, անհրաժեշտ է ցանքից առաջ սերմացուն, նախքան ախտահանելը, լավ չորացնել (տաքացնել), որով զգալի չափով բարձրանում է սերմացուի ծլունակությունը: Տիմիրյազևի անվան Ակադեմիայում կատարված փորձերը ցույց են տվել, որ նույն տարվա բերքից ցանված սերմից ստացվել է աշնանացան ցորեն, սերմը չորացնելու դեպքում՝ 26,7 ցենտներ, իսկ թարմ, առանց չորացնելու՝ 21,7 ցենտներ բերք մեկ հեկտարից:

Յ Ա Ն Ք Ը

Աշնան ցանքի ճիշտ ժամանակի ընտրությունը խոշոր նշանակութուն ունի բարձր բերք ստանալու հա-

մար: Յանքը պետք է կատարել այն հաշվով, որ մինչև սառնամանիքների վրա հասնելը աշնանացանն ուժեղ չափով արմատակալի ու թփակալի և այդ վիճակում գնա ձյան ծածկոցի տակ ձմեռելու: Ուշացած աշնանացանը չի հասցնում մինչև սառնամանիքների վրա հասնելը անհրաժեշտ չափով արմատակալել ու թփակալել և մեծ մասամբ ենթարկվում է ցրտահարության, մանավանդ, երբ ձյան ծածկոցը նվաղ է լինում:

Աշնանացանի թփակալման համար պահանջվում է ցանքից հետո մոտավորապես 30—40 օր. աշնան ցանքի ժամկետը որոշելիս այդ անհրաժեշտ է հաշվի առնել:

Սոցիալիստական Աշխատանքի Հերոսներ՝ Սիրուն Ումբշատյանը, Հակոբ Զրադացպանյանը, Սիսակ Ենգոյանը աշնանացանը կատարում են օգոստոսի վերջին՝ 25—30-ը, իսկ Պաշտուր Դավթյանը, որի օղակի հողամասն ավելի քարքարոտ (դռաջ) է, ցանքը կատարում է ավելի վաղ ժամկետում (օգոստոսի 20-ին):

—Կարևորն այստեղ այն է, —ասում են կոլխոշի անվանի օղակավարները, —որ ցանքը կատարվի լավ նախապատրաստած, խոնավ հողում, որպեսզի ցանված սերմերն արագ և հավասար ծլեն, անկախ անձրևներից, նորմալ դարգանան:

Փորձերը ցույց են տվել, որ ինչպես գերվաղ ցանքը, նույնպես և ուշ ցանքն զգալի չափով իջեցնում է աշնանացան ցորենի բերքատվությունը, առաջին դեպքում բույսերի աշնանից գերաճելու հետևանքով, որի շնորհիվ ընկնում է բույսերի ցրտադեմացկունությունը և երկրորդ (ուշ ցանքի) դեպքում, բույսերի թույլ զարգացման հետևանքով, որի շնորհիվ բույսերը մինչև ուշ աշուն չեն հասցնում անհրաժեշտ չափով աճել ու զարգանալ և դարձյալ տուժում են ձմռան սառնամանիքներից:

Աշնանացանի ազրոտեխնիկայի կարևոր խնդիրներն է նաև ցանքի խորության հարցը:

Ցանքի խորությունը հիմնականում կախված է հողի կազմությունից և նրա խոնավությունից:

Ծանր՝ կավային և խոնավունակ հողերում ցանքը կատարվում է ավելի ծանծաղ, իսկ թեթև, պակաս խոնավունակ հողերում ավելի խորը: Կարևորն այն է, որ սերմերը ցանվեն խոնավ հողում, որը նպաստում է նրանց արագ ծլմանը:

Սոցիալիստական Աշխատանքի Հերոս Խաչատուր Դավթյանը իր օգակի հողամասի քարքարոտ (ղւաջ) և նվազ հողաշերտ ունեցող մասում, որտեղ հողը սակավ խոնավունակ է, ցանքը կատարում է համեմատաբար ավելի խորը՝ 7 սանտիմետր, քան ոչ քարքարոտ, հզոր հողաշերտ ունեցող մասում, որտեղ ցանում է 5—6 սմ խորությամբ: Հողային պայմանները հաշվի առնելով, այդպիսի ցանքն ապահովում է նրա օգակի ամբողջ հողամասում աշնանացանի ծլումը համահավասար, ցանքի ութերորդ օրը:

Ցանքի խորությունը կարևոր է աշնանացանը ցրտահարությունից պաշտպանելու համար:

«Սպարտակ» կոլխոզի օգակավարներն աշնանացանը կատարում են 6—7 սանտիմետր խորությամբ: Դա ապահովում է թփակալման հանգույցի առաջացմանը հողի խոր շերտում, որը մեծ չափով պահպանում է աշնանացանը ցրտահարությունից:

Այդ տեսակետից հետաքրքիր է օգակավարների այն դիտողությունը, որ շարքացանով կատարած ցանքը, երբ սերմերը խորն են թաղվում հողի մեջ, անհամեմատ ավելի քիչ են ենթարկվում ցրտահարության, քան շաղպան

արված աշխատանքներ, երբ սերմերի զգալի մասը հաղիվ է ծածկվում հողով. վերջին դեպքում թփակալման հանգուցյն առաջանում է հողի մակերեսին մոտ և թույլ առանամանիքներից անգամ փնտրվում է:

Մեկ հեկտարի վրա ցանվող սերմացուի քանակը, կամ, ինչպես ասում են, ցանքի նորման, նույնպես շատ կարևոր գործոն է բարձր բերք ստանալու համար: Ցանքի նորման որոշելիս անհրաժեշտ է հաշվի առնել տեղական հողային և կլիմայական պայմանները և ցանվող սորտի առանձնահատկությունները: Քիչ բերրի հողերի համեմատությամբ հարուստ և արգավանդ հողերում ցանքի նորման ավելի պակաս են վերցնում: Խոնավ կլիմայական պայմաններում՝ ավելի մեծ, քան չոր կլիմայական պայմաններում:

Կարևոր է ցանքի նորման սահմանելիս հաշվի առնել նաև սերմացուի հատիկների մեծությունը: Մանրահատիկ սերմ ունեցող սորտերի ցանքը կատարվում է ավելի պակաս նորմայով, քան խոշոր հատիկ ունեցող սորտերի դեպքում:

Բարձր ազդրոտելնիկա կիրառելու պայմաններում, մեկ հեկտար տարածությունը հացաբույսերի լրիվ, նորմալ խտությամբ զբաղեցնելու համար, որ ապահովվի բույսերի փարթամ աճն ու նորմալ զարգացումը և բարձր բերքատվությունը, պահանջվում է ցանել մոտավորապես $5\frac{1}{2}$ միլիոն հատիկ: Ելնելով ցանքի ալդպիսի նպատակահարմար խտությունից և ցանվող հատիկի բացարձակ քաշից (1000 հատիկի քաշից), որը «ուկրաինկայի» համար հավասար է մոտ 36—37 գրամի, պահանջվում է 198—203 կիլոգրամ լրիվ կոնդիցիոն սերմ մեկ հեկտարին:

Այդպես էլ վարվում են սպարտակցիները:

«Սպարտակ» կոլխոզը, որպես առաջավոր սերմնարու-
ծական կոլխոզ, ցանում է բարձրորակ, խոշորահատիկ և
ժանրակշիռ սերմացու, օգտագործելով յուրաքանչյուր հեկ-
տարին 200 կիլոգրամ սերմ:

Հետաքրքրական է օղակավարներ՝ Հակոբ Զրադաց-
պանյանի և Սաչատուր Վարդանյանի այն դիտողությու-
նը, թե ցանքի նորման պակաս լինելու դեպքում մոլո-
խոտեր շատ են աճում:

Բարձր բերքի վարպետները ասում են, որ երբ հո-
ղամասը լրիվ սահմանված խտությամբ չի ցանվում, նը-
պաստավոր պայմաններ են ստեղծվում մոլախոտերի զար-
գացման համար, իսկ երբ հողամասը ցանվում է լրիվ նոր-
մայով՝ մոլախոտերը զրկվում են զարգանալու հնարա-
վորությունից, նրանք մնում են հացաբույսերի ստվերի
տակ և թույլ են զարգանում:

Փորձված հողագործները հողը բարձր որակով մշա-
կելու և պարարտացնելու միջոցով կարողանում են բարձ-
րացնել նրա բերրիությունը և դրանով իսկ պայմաններ
են ստեղծում ցանքի բարձր նորմաներ կիրառելու համար:
Այդպիսի պայմաններում նրանք ամբողջ տարածության
վրա ապահովում են հացաբույսերի անհրաժեշտ խտու-
թյունը և ուժեղ զարգացումը:

Սոցիալիստական Աշխատանքի Հերոս օղակավար Սա-
չատուր Դավթյանն իր օղակի հողամասում ցանքի նորման
որոշելիս, հաշվի է առնում հողամասի առանձնահատկու-
թյունները: Հողամասի թեքության վրա դանդաղ քարքա-
րոտ (դռաշ) մասում ցանքը կատարում է հեկտարին 180
կիլոգրամ նորմայով, իսկ հողամասի հարթ մասում, որտեղ
հողն ավելի խոնավ է, ցանքը կատարում է հեկտարին
200 կիլոգրամի հաշվով:

Փորձառու կոլխոզնիկ Վահան Նավոյանը, ելնելով իբրազմամյա տարիներին փորձից, ասում է, որ խորը ցանքի դեպքում, սերմերն ընկնելով խոնավ և բարենպաստ պայմանների մեջ, տեղի են տալիս բույսերի ավելի ուժեղ թվակալմանը, իսկ ծանծաղ (ոչ խորը) ցանքի դեպքում, թվակալումն անհամեմատ ավելի թույլ է լինում:

Այդ բոլորը հաշվի առնելով ապարտակցիները ցանքը կատարում են խնամքով, արակտորային շաքաղացան մեքենայով, 6—8 սանտիմետր խորությամբ, հեկտարին ցանելով 200 կիլոգրամ բարձրորակ սերմ: Հաշվի առնելով ցանվող հողամասի առանձնահատկությունները, առանձին դեպքերում միայն (քաղաքում և թույլ խոնավ հողերում) ցանքի նորման իջեցնում են մինչև 180 կիլոգրամի:

ՁՅԱՆ ԿՈՒՏԱԿՈՒՄԸ ԱՇՆԱՆԱՅԱՆԻ ԴԱՇՏՈՒՄ

Անջրդի պայմաններում ցորենի բարձր բերք ստանալու համար վճռական նշանակություն ունի հողի մեջ խոնավության կուտակումը: Այդ տեսակետից, բացի ցելի օգտագործումից, խոշոր նշանակություն ունի նաև ձյան կուտակումն աշնանացանի դաշտերում:

Ագրոխիմիկ պարապունքների ժամանակ օդակափարները շատ էին լսել իրենց կոլխոզի ագրոնոմի հետաքրքիր զրույցներն աշնանացանի դաշտերում ձյան կուտակման նշանակության մասին: Այդ ձեռնարկումը նորություն էր «Սպարտակ» կոլխոզի համար: Նոր ագրոձեռնարկման կիրառման նախաձեռնությունը իր վրա վերցրեց օդակափարուհի, Սոցիալիստական Աշխատանքի Հերոս՝ Սիրուն Ումրչատյանը:

Ձմռանը, երբ ձյունն ամբողջովին ծածկեց դաշտը՝

գեկտեմբերի 25-ին օդակավարուհին իր դաշտում չափեց ձյան շերտը, որը հավասար էր 20—25 սանտիմետրի։ Հաջորդ օրը Սիրուն Ումրշատյանն իր օդակի անդամների հետ թիերն առած գնացին դաշտ։ Օդակի թև երիտասարդ և թև հասակավոր անդամների համար դա մի նոր աշխատանք էր, որ այդ օրը նրանք պետք է կատարեին դաշտում։ Օդակավարուհին կոլխոզնիկներին դասավորեց օդակի հողամասի վրա, յուրաքանչյուրին բացատրեց իր անելիքը։ Սկսվեց մի շատ հետաքրքիր աշխատանք, որը ընթանում էր սոցիալիստական մրցության նշանաբանով։ Օդակն իր 8 հեկտար աշնանացան հողամասի վրա ձյունը թիերով հավաքեց և 10 մետր երկարությամբ, 50—60 սմ բարձրությամբ պատնեշներ պատրաստեց։ Պատնեշները մեկը մյուսից 10—15 մետր հեռու էին։ Եվ այդպես, յուրաքանչյուր 15—20 մետրի վրա պատնեշների մի գիծ ստեղծվեց։ Այդ պատնեշներին տրվել էր շախմատի ձև, որպեսզի տեղացած ձյունը մնար դաշտում ու քամին չտաներ։

Պատնեշներ պատրաստելու համար ձյունը հավաքեցին այնպես, որ հողի երեսը չբացվեր և աշնանացանը չմերկանար, այլ կերպ բույսերը կարող էին ցրտահարվել։ Պատնեշների ընդհանուր ուղղությունը փչող քամիներին հակադիր էր, որպեսզի քամիները ոչ միայն չկարողանային ձյունը դաշտից քշել-տանել, այլ ընդհակառակը, հավաքեին ու կուտակեին ձյունը պատնեշների մեջ։

Երբ 15 օր հետո օդակավարուհի Սիրուն Ումրշատյանն իր օդակի մի քանի անդամների հետ գնաց դաշտ ստուգելու կատարված աշխատանքի արդյունքը, պատկերը գարմանալի էր։ Ամբողջ հողամասի վրա ձյունը հաստ շերտով ծածկել էր դաշտը, այնպես որ հեռվից այդ հո-

դամասը հարեան դաշտերի համեմատությամբ աչքի էք
ընկնում ձյան հաստ ծածկոցով:

Այս եղանակով ձյան կուտակման արդյունքն ավելի
տկնառու դարձավ դարնանը: Ձնայած դարնանն այդ հո-
դամասում ձյունը մի քանի օր ուշ հարվեց, բայց հոգն
այնքան խոնավություն էր կուտակել իր մեջ, որ նույն-
իսկ անձրևների բացակայության դեպքում էլ այդ խո-
նավությունը շատ երկար ժամանակ կբավարարեր աճող
աշնանացանի պահանջները:

Հետեւելով Սիրուն Ումրշատյանի օրինակին, ձյան
կուտակման աշխատանքները կազմակերպեցին նաև օդա-
կավարներ Հակոբ Ջրագացականյանը և Դրաստամատ
Սարգսյանը:

Ձյան կուտակումն առանձնապես հաջող կատարվեց
Դրաստամատ Սարգսյանի օգակի հողամասում: Ձյան շերտն
այստեղ այնքան հաստ էր, որ նույնիսկ մտատանջու-
թյուն էր պատճառում օդակավարին, թե արդյոք դար-
նանը շատ չի՞ ձգձգվի ձյան հալուցը և հետ չի՞ դցի բույսերի
դարգացումը: Վտանգը կանխելու համար Դրաստամատ
Սարգսյանը վարպետորեն գտավ այդ հարցի լուծումը:
Վաղ դարնանը, ձյան հալուցի ժամանակ, նա դաշտ փո-
խադրեց որոշ քանակությամբ խառնաղբ (որի հիմնական
մասը մոխիր էր) և իր օգակի անդամների հետ միասին
հավասարաչափ շաղ տվեց ձյան վրա: Այսպիսով յուրա-
քանչյուր հեկտարի վրա փռվեց մոտ վեց տոննա խառ-
նաղբ: Խառնաղբն արագացրեց ձյան հալուցը և դաշտը
ձյունից ազատվեց համարյա նույն ժամանակ, ինչ որ
հարեան՝ ձյուն չկուտակած դաշտերում: Միևնույն ժա-
մանակ խառնաղբի մեջ եղած սննդանյութերը ձյան հա-
լուցի ընթացքում լուծվեցին և ներծծվեցին հողի մեջ՝ պա-
րարտացնելով այն:

Ձյան կուտակումը շատ լավ արդյունք տվեց։ Աշնանացանը ձյան տակից դուրս եկավ լավ ձմեռած, առողջ վիճակում, չկային ցրտահարված կամ նեխված բույսեր, իսկ հողը խոր շերտով խոնավացած էր։

ԱԳՐՈՆՄԲԱԿԻ ՊԱՐԱՊՄՈՒՆԻՔՆԵՐԸ

Ձմռան ընթացքում ազատ ժամանակ շատ կար։ Դա հնարավորություն էր տալիս հաճախակի անցկացնել ագրոխմբակի պարապմունքներ։ Պարապմունքներին մասնակցում էին կոլխոզի բրիգադիրները, օգակավարները, մաճկալները և շատ կոլխոզնիկներ։ Կոլխոզի ագրոնոմի իր հետաքրքիր ազդրողությամբով հարստացնում էր կոլխոզնիկների գիտելիքները և դրա հետ միասին նախապատրաստում նրանց գալիք գարնանային աշխատանքներին։ Նա իր գրույցներից մեկը նվիրեց աշնանացանի դաշտերում ձյան կուտակման խնդրին, որը մեծ հետաքրքրություն առաջացրեց կոլխոզնիկներին մեջ։ Հենց այդ օրը կոլխոզի անվանի օգակավարները որոշեցին այդ ձեռնարկումը կիրառել իրենց հողամասում և այդպես էլ արին։

Ցեխերի նշանակություն և նրանց ճիշտ մշակություն, մոլախոտերի դեմ պայքարի, սերմնաբուծություն, ցանքաշրջանառություն և բազմաթիվ այլ հարցերի պարզաբանումը ագրոխմբակում նոր լիցք էր տալիս և գիտելիքներով զինում բարձր բերքի վարպետներին։

ՑԱՆՔԻ ԽՆԱՄՔԸ

Աշնանացանի գարնանային խնամքի կարևոր միջոցառումներն են վաղ գարնանային սնուցումը, փոցխումն ու քաղհանը։

Անուցման համար բարձր բերքի վարպետները սովորաբար օգտագործում են լավ հասունացած գոմաղբ, հեկտարին 6—10 տոննա, խառնաղբ՝ 4—6 տոննա, կամ մոխիր մեկ տոննա:

«Սպարտակ» կոլխոզի օղակավարները անուցման համար օգտագործում են խառնաղբ, մոխիր և խամ հող: Ուամ հողը նրանք վերցնում են հողամասերի եզրերից, կամ բլուրներից, մաքրում քարերից ու ձիմից, կույտեր անում արտերի զանազան կողմերում և այնուհետև դույլերով կամ գոգնոցներով տանում ու շաղ են տալիս աշնանացանի արտերի վրա և աղա փոցխում զիգ-զագ փոցխով: Օղակավարունի Սիրուն Ումրշատյանը աշնանացանի անուցման համար օգտագործում է խամ հող յուրաքանչյուր հեկտարին մոտ 5 տոննա: Օղակավար Դրաստամատ Սարգսյանը, բացի վեցական տոննա խառնաղբից, որ շաղ էր տվել ձյան վրա, անուցման համար լրացուցիչ օգտագործել է ևս երկուական տոննա խամ հող՝ յուրաքանչյուր հեկտարին: Օղակավար Սաչատուր Վարդանյանը անուցման համար դաշտ է փոխադրել 12 տոննա մոխիր, նախապես խառնել այն կրկնակի չափով խամ հողի հետ և շաղ տվել 8 հեկտար աշնանացանի վրա:

Առանձնապես ուշագրավ է օղակավար Դրաստամատ Սարգսյանի փորձը, աշնանացանի անուցման գործում, որը նա կատարել է ձնհալի ժամանակ:

Գիտա-հետազոտական հիմնարկների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ սառած հողի վրա կամ ձնհալի ժամանակ անուցման նպատակով շաղ տված պարարտանյութն ավելի մեծ արդյունք է տալիս, քան փոցխելու ժամանակ տվածը: Այսպես օրինակ, Մոլոտով քաղաքի Գյուղատնտեսական ինստիտուտի կողմից կատարված աշ-

նանացան ցորենի սնուցման փորձերը տվել են հետևյալ արդյունքը:

Սնուցման ձևերի ազդեցությունը առնաձայն ցորենի բերքի վրա

Սնուցման եղանակը	Բերքը ցենտներով 1 հեկտարից	Փշացած բույսերի տոկոսը
Սնուցում վաղ զարնանը սառչող հողի վրա	18,8	13,9
Սնուցում փոքրիկ ժամանակ	16,3	16,2
Առանց սնուցման	11,9	22,3

Այս տվյալներից պարզ երևում է վաղ զարնանը՝ դեռևս սառած հողի վրա կիրառվող սնուցման արդյունավետությունը: Դա բացատրվում է նրանով, որ վաղ զարնանը, երբ աշնանացանը նոր է սկսում արթնանալ և աճել, հողի մեջ մատչելի սննդանյութեր և հատկապես ազոտական սննդանյութ շատ չնչին քանակությամբ են լինում: Այդպիսի վիճակ լինում է նույնիսկ այնպիսի հողամասերում, որոնք աշնանից ուժեղ պարարտացվել են: Այդ պատճառով աշնանացանը վաղ զարնանը սննդանյութերի և հատկապես ազոտական սննդանյութերի ուժեղ կարիք է զգում: Ուստի, վաղ զարնանը տրվող սնուցումը լրացնում է սննդանյութերի պակասը, որի շնորհիվ բույսերն արագորեն սկսում են աճել ու զարգանալ:

Այս բոլորից հետո պարզ է, որ աշնանացանի համար որքան շուտ տրվի սնուցումը, այնքան ավելի արդյունավետ կլինի և ընդհակառակը, որքան ուշացվի սնուցումը, այնքան նրա արդյունքը քիչ կլինի: Բացի դրանից, ձնհալի

ժամանակ սնուցման համար տրվող պարարտանյութերն ավելի հեշտ և արագ են ներծծվում հողի մեջ և ձյան ջրերի օգնութեամբ թափանցում բույսերի արմատներին:

Սովորական ձևով սնուցում կատարելիս, պարարտանյութն աշնանացանի վրա համահավասար շաղ տալուց հետո, խառնում են հողի հետ, դաշտը մեկ կամ երկու անգամ զիգ-դազ փոցխով լավ փոցխելու միջոցով:

Աշնանացանի խնամքի կարևորագույն միջոցառումներին մեկն էլ ցանքերի վաղ դարնանային փոցխումն է: Փոցխումը պետք է կատարել անուշաման հողի հասունութեան (քեշի) ժամանակ: Աշնանացանը դարնանը փոցխելու շնորհիվ փխրեցվում է հողի երեսի կեղևակալված շերտը, որով հնարավորութիւն է ստեղծվում օդի թափանցման համար դեպի հացաբույսի արմատները և միևնույն ժամանակ կանխվում է ջրի գոլորշիացումը հողից, որն անջրգի պայմաններում բացառիկ նշանակութիւն ունի բույսերի հետագա զարգացման համար: Բացի դրանից, հողի մեջ օդի թափանցումը և խոնավութեան պահպանումը զգալի չափով նպաստում են հողի մեջ ապրող միկրոօրգանիզմի գործունեութեանը, որի շնորհիվ հողում ավելանում է բույսերի համար մատչելի սննդանյութերի քանակը, որոնք աշնանացանի հողերում վաղ դարնանը նվազագույն չափով են լինում:

Այս բոլորից հետո սլարգ է, թե որքան խոշոր նշանակութիւն ունի աշնանացանի վաղ դարնանային փոցխումը:

— Առաջներում մենք չէինք կարող պատկերացնել անգամ, որ կարելի է ցանքի մեջ զիգ-դազ գցել և փոցխել, ասենք այդ ժամանակներում մեր գլուղում զիգ-դազ փոցխի մասին մարդիկ գաղափար էլ չունեին:

Սակայն այժմ դժվար թե մեր դյուղում գտնվի մի կուխոգնիկ, որը չգնահատի փոցխման արդյունավետութունը,—ասում է 60-ամյա անվանի օղակավար Սիսակ Ենգոյանը, որն իր աշնանացանի հողամասը շատ մեծ խնամքով փոցխել է երկու անգամ:

«Սպարտակ» կոլխոզի բարձր բերքի վարպետներն այդ ձեռնարկումը մեծ սիրով են կատարում և գնահատում են այն որպես բարձր բերք ստանալու հիմնական պայմաններից մեկը:

Փոցխումը կատարվում է շաբաթներին հակառակ, կամ շեղ ուղղությամբ, որպեսզի բույսերն արմատախիլ չլինեն: Մեկ անգամ փոցխում են, եթե աշնանացանը թույլ է զարգացած և երկու անգամ՝ եթե աշնանացանը ուժեղ թփակալած ու զարգացած է:

«Սպարտակ» կոլխոզի օղակավարներն իրենց աշնանացանները փոցխում են երկու անգամ շեղ ուղղությամբ, մեկը մյուսին խաչաձև, դա լիովին փխրացնում է հողի վերին կեղևակալվող շերտը և թարմացնում դաշտը:

Փոցխումը արդյունք չի տալիս, եթե կատարվում է ուշացումով հողի երեսը ամուր կեղևակալելուց հետո, այդ դեպքում փոցխելու ժամանակ, փոցխի ատամները քանդում, կտոր-կտոր դուրս են հանում հողի կեղևը, դրա հետ միասին արմատախիլ անելով զգալի քանակությամբ հացարույսեր: Բացի դրանից, որքան ուշացվում է փոցխումը, այնքան ավելի մեծ չափով է տեղի ունենում խոնավության կորուստը հողից, որը կեղևի մազանոթներով վեր է բարձրանում և անտեղի գոլորշիանում:

«Սպարտակ» կոլխոզի բարձր բերքի վարպետներն ուշադիր հետևում են հողի հասունությանը և փոցխումը կատարում են ճիշտ՝ հողի հասուն (քեշի) վիճակում:

Աշխատանքների փոքրամասն մեծ նշանակություն ունի նաև վաղ դարնանից զարգացող մոլախոտերի երիտասարդ ծիլերը ոչնչացնելու համար:

Աշխատանքի խնամքի կարևորագույն միջոցառումներն էլ մեկն էլ քաղհանն է: Այդ աշխատանքը չպետք է ուշացնել, քանի որ մոլախոտերն իրենց զարգացման համար հողից մեծ քանակությամբ խոնավություն և սննդանյութեր են կլանում, ուստի քաղհանը յուրաքանչյուր օր ուշացնելը հացաբույսերին ավելի ու ավելի է զրկում խոնավությունից ու սննդանյութերից:

Սոցիալիստական Աշխատանքի Հերոս, կոլխոզի վարչության նախագահ՝ ընկ. Սարգիս Վարդանյանը շատ պատկերավոր ձևով է բնութագրում մոլախոտերի հացքած կնասը: Նա ասում է.

— Մոլախոտերը կլանում են ցորենի բաժին խոնավությունն ու սննդանյութերը: Ոչնչացրու մոլախոտը, որ նա չկարողանա ոչնչացնել ցորենին:

Քաղհանը պետք է կատարել այն ժամանակ, երբ հողը դեռ չի չորացել, այլ կերպ հնարավոր չի լինում մոլախոտը հանել արմատով: Այնպիսի բազմամյա մոլախոտեր, ինչպիսիք են՝ «գեղավերը», զանազան փշերը, պատռատուկը և այլն, եթե քաղհանի ժամանակ դրանց արմատները մնում են հողի մեջ, կարճ ժամանակամիջոցում նորից են աճում: Այդպիսի մոլախոտերը քաղհանելիս անհրաժեշտ է օգտագործել «խշտիկ» և հանել դրանք արմատներով:

Արտը չի կտրելի քաղհանել նաև անմիջապես անձրևից հետո, ցեխ ժամանակ: Այդ դեպքում բույսերը տրորվում, կպչում են ցեխին և հետագայում դժվարությամբ են կարողանում վերականգնվել: Քաղհանած մոլախոտը պետք է հեռացնել դաշտից, որովհետև նրանք

իրենց վրա կրում են զանազան հիվանդությունները և
ֆնատառուները վարակ, բացի դրանից, մոլախոտերից
շատերն ընդունակ են արմատներ գցել և նորից վարա-
կել զաշար:

Բարձր բերքի վարպետները մոլախոտերի դեմ մղվող
պայքարը հիմնականում տանում են ցելադաշտում, ցելի
մշակման ժամանակ: Դա մեծ չափով մաքրում է հողը
մոլախոտերից, չնայած՝ դրան, ախուամենախնիվ հետագա-
յում կարիք է զգացվում կատարել նաև ցանքերի քաղ-
հան մեկ, երկու, երբեմն նույնիսկ երեք անգամ, հողի
մեջ դեռ մնացած և նոր դարգացող մոլախոտերը ոչնչաց-
նելու համար:

Մոլախոտերի տարածման աղբյուրներից մեկն էլ
կարող է հանդիսանալ գոմաղբը, եթե այն դաշա է փո-
խադրվում թարմ՝ ոչ քայքայված վիճակում: Հայտնի է,
որ մոլախոտերի սերմերից որոշ մասը և հատկապես «պո-
չուկի» սերմերը, եթե դրանք անասունները ուտելու ժա-
մանակ ատամներով չեն փշրում, մանրացնում, անցնելով
անասունի մարսողական օրգանների միջով, շատ դեպ-
քում իրենց ծլունակությունը չեն կորցնում և գոմաղբի
հետ դաշա փոխադրվելով վարակում են հողը: Պարզված
է, որ 20—30 տոննա թարմ գոմաղբը, որպիսի քանա-
կությունը սովորաբար օգտագործվում է մեկ հեկտարի
պարարտացման համար, իր մեջ կարող է պարունակել
մոլախոտերի մի քանի միլիոն ծլունակ սերմեր և մոլա-
խոտերի տարածման տեսակետից վարակի լուրջ աղբյուր
է հանդիսանում:

Այստեղից էլ պարզ է, թե որքան կարևոր է գոմ-
աղբի լավ նախապատրաստելը հողի պարարտացման հա-
մար:

ՊԱՅԻԱՐ ՄԿՆԵՐԻ ԴԵՄ

Մկները խոշոր փառ են պատճառում գյուղատնտեսութեանը: Առանձնապէս մեծ է նրանց պատճառած փասոր մեր սեպուղիկայի լեռնային շրջաններում, անջրգի ցանքերին: Նրանք մեծ փառ են պատճառում ոչ միայն հացահատիկային կուլտուրաներին, այլ նաև կարտոֆիլին, բանջարանոցային կուլտուրաներին և այլն:

Մկները բազմաճատում են ընդունակութուն ունեն: Մեկ էգ մուկը գարնան, ամռան և աշնան ընթացքում ընդունակ է յուրաքանչյուր 20—25 օրը մեկ անգամ սերունդ տալ՝ յուրաքանչյուր դեպքում մինչև 10—12 ձագ: Դրանցից յուրաքանչյուրը 45 օր հետո ընդունակ է դառնում բեղմնավորման և նոր սերունդ տալու:

Առանձնապէս նպաստավոր պայմաններ են ստեղծվում նրանց զարգացման համար, երբ դաշտում առատ կեր կա և գարնան ու աշնան եղանակները տաք և չոր են: Հաշված է, որ 5 գույգ մկան մեկ տարվա սերունդը կարող է հասնել մինչև 10,000-ի, Յուրաքանչյուր մուկը մեկ տարվա ընթացքում ուտում և փչացնում է ավելի քան երկու կիլոգրամ հացահատիկ: Այստեղից պարզ է, թե որքան մեծ կարող է լինել մկների պատճառած փասոր և որքան կարևոր է նրանց դեմ մղվող պայքարը:

Այդ բոլորը հաշվի առնելով կոլխոզը մեծ տեղ է տալիս մկների դեմ մղվող պայքարին: Մկների դեմ տարվող պայքարի աշխատանքները կոլխոզում անց են կացվում տարվա ընթացքում երկու անգամ՝ գարնանը և աշնանը: Պայքարի համար օգտագործում են մկնդեղ, որը խառնելով գարու ալյուրի հետ, շաղախում են ջրով, խմորի փոքրիկ գնդիկներ շինում և գցում մկների բները: Այս ձևով պայքարելու համար հեկտարին ծախսվում է

մոտավորապես կես կիլոգրամ գարու ալյուր և 15 դրամ մկնդեղ:

Փորձերը ցույց են տալիս, որ մկներին դեմ տարվող պայքարում ավելի լավ արդյունքի կարելի է հասնել մկների բները կալցիում արսենիտ կոշվող թուլանով փոշոտելու միջոցով: Այս դեպքում ամեն մեկ բնանցքին լցնում են մեկ գրամ թուլանավոր փոշի: Մկները ներս ու դուրս անելիս քսվում են թուլանին, և, այնուհետև, իրենց մաքրելիս լիզում են թաթիկներին և մարմնի այլ տեղերին քսված փոշին ու թուլանավորվում:

Նկատված է, որ մկները չեն զարգանում թաց և խոնավ տեղերում:

Օղակավարներ՝ Սիրուն Ումըշատյանի, Հակոբ Զրադացականյանի և Դրաստամատ Սարգսյանի օղակների հոգամասերում, որտեղ կատարվել էր ձյան կուտակում, մկներ ավելի քիչ կային, իսկ Սիսակ Ենգոյանի, Սաչատուր Վարդանյանի և Սաչատուր Դավթյանի օղակների հոգամասերում գարնանը որոշ չափով մուկ սրնաց, որոնց դեմ ապրիլի 15-ից--20-ը նրանք օգտագործեցին վերոհիշյալ՝ մկնդեղով թուլանավորված, գարու ալյուրից պատրաստած գնդիկները:

Կարևոր է նշել, որ մկների դեմ տարվող պայքարի ընդհանուր գործում մեծ նշանակություն ունի նաև վարի խորությունը: Խոր վարի դեպքում քանդվում և ափերվում են մկների բները և ոչնչացվում է նրանց այնտեղ եղած սերունդը: Վնասակար է դաշտում հնձից հետո դարմանի կամ ծղոտի կույտեր թողնելը: Դրանք լավ ապաստարաններ և ձմեռելու տեղ են ծառայում մկների համար:

Մկներին ոչնչացնելու համար պահանջվում է պայ-

քարի գործը կազմակերպել ոչ միայն առանձին օղակի, բլրիգաղի կամ կոլխոզի սահմաններում, այլև ամբողջ շրջանի սահմաններում, որովհետև միևերը շատ հեշտ և արագ կերպով անցնում են մեկ հողամասից մյուսը՝ վարակելով ընդարձակ տարածություններ:

ԲԵՐՔԱՀԱՎԱՔԸ

Բերքահավաքը դաշտային աշխատանքների ամենապատասխանատու և վճռական շրջանն է: Այն պետք է կատարել լավ նախապատրաստված, կազմակերպված ու սեղմ ժամկետներում, մանավանդ մեր ռեսպուբլիկայի լեռնային շրջաններում, որտեղ աշունը հաճախ անձրևային է լինում և կարճ:

—Ամենագլխավորը, բերքահավաքի գործում՝ դա պաշքարն է կորուստների դեմ,—ասում է Սոցիալիստական Աշխատանքի Հերոս, կոլխոզի վարչության նախագահ Սարգիս Վարդանյանը: Ես դիտել եմ, որ բերքի կորուստ առաջ է դալիս շատ պատճառներից, ամենից առաջ կորուստ է լինում հունձը ժամանակին չկատարելու հետևանքով: Ընկեր Ստալինն իմաստուն խոսքեր է ասել բերքահավաքի մասին: Առաջնորդն ասել է, որ բերքահավաքը սեզոնային գործ է, ժամանակին հավաքեցիր՝ կշահես, եթե ուշացնես՝ տանուլ կտաս: Մեր կոլխոզնիկները մենսագործելով ընկեր Ստալինի ցուցումները բերքահավաքի մասին, ժամանակին, առանց մեկ օր ուշացնելու սկսում են դաշտերից բերքը հավաքել և այդ միջոցով շահում են, թույլ չեն տալիս, որ բերքը կորուստի մատնվի: Մենք հավաքում ենք հնձված արտերում և փոխադրման ճանապարհներին ընկած ամեն մի հասկը:

Բերքի կորուստ է լինում նաև բերքի փոխադրումը

և կախումը ուշացնելուց, կախող մեքենաների ոչ սարքին վիճակում աշխատելուց և այլն:

—Ամենահամեստ հաշվումներով, եթե վերոհիշյալ պատճառներով մենք յուրաքանչյուր հեկտարից կորցնելու լինենք նույնիսկ հիսունական կիլոգրամ հացահատիկ, դա մեր կոլխոզի համար, սրը ցանում է 930 հեկտար տարածություն, կկազմի 40—50 տոննա: Այս բոլորից հետո պարզ է, թե որքան խոշոր նշանակութուն ունի կորուստների դեմ տարվող պայքարը:

«Սպարտակ» կոլխոզի օղակավարներն առանձին խնամքով են կատարում բերքահավաքը, որպեսզի կորուստների տեղիք չտան: Ոչ մի հասկ չթողնել դաշտում, այս է սպարտակցիների սոցիալիստական պարտավորություններից մեկը, որ նրանք կատարում են ճշտությամբ: Օղակավար ԴրաստաՊատ Սարգսյանը ասում է.

—«Ուկրաինական» լավ սորտ է, բերքատու, սակայն նա հասունանալիս համեմատաբար շուտ է թափվում, հատիկները կորուստ շատ է լինում, ուստի և «ուկրաինական» բերքահավաքի նկատմամբ պետք է առանձնապես ուշադիր լինել: «Ուկրաինական» բերքահավաքը ոչ մի օր չպետք է ուշացվի:

Անվանի օղակավարներն այդ բանը հաշվի առնելով երբեք թույլ չեն տալիս, որ բերքահավաքն ուշանա: Հասունացած դաշտի բերքահավաքը կատարում են երկու կամ երեք օրում, հնձում անմիջապես, խուրձ են կապում և նույն օրն էլ փոխադրում կալը, որովհետև թարմ հնձած ցորենն անմիջապես կալ փոխադրելով բերքի կորուստը չնչին է լինում:

Մեծ արդյունք և քիչ կորուստ է լինում նաև այն ժամանակ, երբ բերքահավաքը—հունձը կատարվում է լուսնյակ գիշերներին:

Պիշերային հնձի առավելությունները և հատկապես «Ուկրաինկա» ցորենի թափվելու հատկությունը ի նկատի ունենալով, «Սպարտակ» կոլխոզը անվանի օղակավաբներն ըստ հնարավորության հունձը կատարում են գիշերները, կամ շատ վաղ առավոտյան՝ շաղը դրած ժամանակ:

Օղակավար Սիրուն Ումբշատյանն իր օղակի հողամասում բերքահավաքը կատարել է կոմբայնով՝ օգոստոսի 21-ին: Նա շատ դոճ է կոմբայնի աշխատանքից, քանի որ կոմբայնով բերքահավաքը կատարվում է արագ և զգալի չափով կրճատվում են այն կորուստները, որոնք տեղի են ունենում սովորական ձևով կատարվող բերքահավաքի ժամանակ:



Մենք համառոտ կերպով պատմեցինք «Սպարտակ» կոլխոզի Սոցիալիստական Աշխատանքի Հերոսների փորձի մասին: Ակնհայտ է մի հանգամանք, որ «Սպարտակ» կոլխոզի կոլխոզնիկները համառորեն հետևում են ագրոնոմիական գիտությանը, բարեխղճորեն կիրառում են ագրոկոմպլեքսը և դեպի աշխատանքը ցուցաբերում են ազնիվ վերաբերմունք:

Բարձր բերքի վարպետների կիրառած ագրոձեռնարկումները կոմպլեքսը վերջին հաշվով հետապնդում է հետևյալ հիմնական նպատակները.

1. Ճշտությամբ կիրառել խոտադաշտային ցանքաշրջանառություն.

2. կիրառվող ցանքաշրջանառության սխեմանում, առաջավոր գիտության ցուցմունքներով ապահովել հողի ճիշտ և ժամանակին մշակումը, պարարտացումը, դրա-

նով իսկ սխտեմատիկաբար բարձրացնել հողի բերրիութ-
յունը:

3. Ցանել բարձր բերքատու սերմադաշտերից ստաց-
ված սորտային, լիարժեք, կոնդիցիոն և ախտահանված
սերմացու: Ապահովել ցանքի համար սահմանված լրիվ,
նորմալ խտություն, տարածության յուրաքանչյուր միա-
վորի վրա:

4. Ճշտությամբ կիրառել ցանքերի խնամքի վերա-
բերյալ առաջավոր գիտության ցուցմունքները՝ աշնա-
նացանի դարնանային սնուցումն ու փոցխումը, քաղհա-
նը, պայքարը մկների դեմ, անջրդի պայմաններում
ձյան կուտակումը և այլն:

5. Աշխատանքի ճիշտ կազմակերպումով ապահովել
բերքի ժամանակին և անկորուստ հավաքը:

«Սպարտակ» կոլխոզի Սոցիալիստական Աշխատանքի
Հերոսների կողմից կիրառած ագրոձեռնարկումները մի-
անգամայն մատչելի են մեր բոլոր կոլխոզների համար:

Հարկավոր է լայն չափով օգտագործել սպարտակցի-
ների փորձը, որը մեծ խթան կհանդիսանա մեր սոցիա-
լիստական դաշտերի բերքատվության բարձրացման գոր-
ծում:



ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ

1. Մեծ վերելքի ճանապարհին	3
2. Բերքատվության աճը	7
3. Ցանքաշրջանառությունը	10
4. Վաղ ցեղը	13
5. Պարարտացում	19
6. Սերմացուն	22
7. Ցանքը	24
8. Զյան կուտակումը աշնանացանի դաշտում	29
9. Ագրոսմբակի պարապմունքները	32
10. Ցանքի խնամքը	32
11. Պայքարը մկների դեմ	39
12. Բերքահավաքը	41

Պատ. իմբազեր՝ Բ. Մ. ԴԱՐԱՍԵՅԻՐՅԱՆ

Տեղ. իմբազեր՝ Վ. Մանուկյան


Սրբազրել՝ Ա. Արզումանյան


Հանձնված է արտադր. 30/VIII 1948 թ., ստորագրված է տպելու 7/IX 1948 թ.

ՎՅ 04421, հրատ. 579, տպավ. 489, տիրոժ 2000, 3 տպագր. ժամ.

մեկ մամուլում 24576 տպանիշ

Հայկական ՍՍՌ ԳԱ տպարան, Երևան, Աբովյան 104





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0008801

9000 1 0.

ЦЕНА

11
18207